AMBASSADE DE FRANCE EN ARMÉNIE

Liberté
Égalité
Fraternité

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտամրցույթ

Բարելավել Ֆրանսերենի որպես օտար լեզվի (FLE) դասավանդման հմտությունները Հայաստանում վերապատրաստողների ազգային ցանց ստեղծելու նպատակով

Համատեքստ

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի և համագործակցության բաժինը 2024-2025 թվականների համար մեկնարկում է <<Ֆրանսերենի խթանումը Հայաստանում >> պիլոտային նախագիծը, որը ֆինանսավորվում է Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության կողմից՝ համագործակցելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:

Ծրագրի նպատակն է աջակցել հայկական դպրոցների կրթական քաղաքականությանը՝ ի նպաստ ֆրանսերենի ուսուցման և բազմալեզվության:

Նպատակները և ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ստեղծել ֆրանսերենի որպես օտար լեզվի (FLE) ուսուցիչների վերապատրաստողների ազգային ցանց, նպատակ ունենալով.

• Արձագանքել երկրում ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստման կարիքներին, մասնավորապես նոր ծրագրի շրջանակներում
• Շարունակաբար ամրապնդել FLE մասնագետների հմտությունները

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ հայտարարում է հայտամրցույթ՝ վերապատրաստող դասընթացավար դառնալ ցանկացող FLE ուսուցիչներին հնարավորություն տալով մասնակցել վերապատրաստման դասընթացների:

Ընտրված մասնակիցները 2024-2025 թվականների ընթացքում կմասնակցեն France Education International (FEI) – ի կողմից համակարգվող և 225 ժամ ընդհանուր տևողությամբ դասընթացների:

Դասընթացի ավարտին, իրենց վերապատրաստումը վավերացնելուց հետո, մասնակիցները կդառնան Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից պաշտոնապես ճանաչված վերապատրաստող դասընթացավարներ: Որպես վերապատրաստող նրանց աշխատանքը կվարձատրվի նախարարության կողմից:

AMBASSADE DE FRANCE EN ARMÉNIE
Liberté Égalité Fraternité

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024-2025 թթ. վերապատրաստման դասընթացների նկարագրությունը

Մաս 1. Ամրապնդել և զարգացնել FLE դասավանդման հմտությունները

Մոդուլի անվանումը	Տևողություն	Ընթացակարգ	Նախատեսվող ժամանակահատված
Դասավանդման համար CECRL սկզբունքների կիրառում	15 ժամ	Հեռավար	2024թ. ապրիլ - հունիս
Գնահատման համար CECRL սկզբունքների կիրառում	15 ժամ		
Դասաժամի կազմակերպում ըստ դասագրքի	15 ժամ		

Մաս 2. Զարգացնել և դինամիկ դարձնել FLE ուսուցիչների դասավանդման պրակտիկան

Մոդուլի անվանումը	Տևողություն	Ընթացակարգ	Նախատեսվող ժամանակահատված
BELC դասավանդման ծրագրից 2 մոդուլ ըստ ընտրության	30 ժամ	Առկա, Ֆրանսիայում	2024թ. հուլիսի առաջին կամ երկրորդ կես
Ֆրանսերենի դասընթացը դարձնել բազմազան և տարաժանր գիտելիքների աղբյուր	30 ժամ		

Մաս 3. Համապատասխանեցնել և կիրառել հեռավար ուսուցման փորձարկված մոդուլները

Մոդուլի անվանումը	Տևողություն	Ընթացակարգ	Նախատեսվող ժամանակահատված
Համապատասխանեցնել և կիրառել փորձարկված մոդուլները	30 ժամ	Առկա Հայաստանում և հեռավար	Պետք է հստակեցնել
Աջակցել ուսուցիչների՝ FLE դասավանդման վերաբերյալ նրանց գիտելիքների ամրապնդման համար հեռավար վերապատրաստմանը	30 ժամ		

Մաս 4. Առկա դասընթացների տարածում (վավերացում)

Մոդուլի անվանումը	Տևողություն	Ընթացակարգ	Նախատեսվող ժամանակահատված
Կազմակերպել և վարել FLE ուսուցիչների վերապատրաստման առկա դասընթացներ	30 ժամ	Առկա Հայաստանում և հեռավար	Պետք է հստակեցնել
Ստեղծել առկա ուսուցման մոդուլներ	30 ժամ		

AMBASSADE
DE FRANCE
EN ARMÉNIE

Liberté
Égalité
Fraternité

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտամրցույթին մասնակցելու կարգը

Նախապայմաններ՝

- FLE (Ֆրանսերենը որպես օտար լեզու) դասավանդման առնվազն 2 տարվա փորձ
- Ֆրանսերենի առնվազն B2 մակարդակ
- Մոտիվացիա և հասանելիություն

Դիմելու համար՝

Ուղարկեք ձեր ինքնակենսագրականը, ուղեկցող նամակը մինչև 2024 թվականի ապրիլի 7-ը էլեկտրոնային փոստով տիկին Դոմինիկ Վեսին Dominique.vaysse@diplomatie.gouv.fr.

Հավելյալ տեղեկատվության համար՝ Dominique.vaysse@diplomatie.gouv.fr